



*Համարը* N 666-Ն  
*Տիպը* Հրաման  
*Սկզբնաղբյուրը* ՀՀԳՏ 2014.07.15/16(495) Հոդ.184  
*Ընդունող մարմինը* Կրթության և գիտության նախարար  
*Ստորագրող մարմինը* Կրթության և գիտության նախարար  
*Վավերացնող մարմինը*  
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 25.07.2014

*Տեսակը* Հիմնական  
*Կարգավիճակը* Գործում է  
*Ընդունման վայրը* Երևան  
*Ընդունման ամսաթիվը* 20.06.2014  
*Ստորագրման ամսաթիվը* 20.06.2014  
*Վավերացման ամսաթիվը*  
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

- [Կապեր այլ փաստաթղթերի հետ](#)
- [Փոփոխողներ և ինկորպորացիաներ](#)

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 1194-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»  
ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից  
7 հուլիսի 2014 թ.  
Պետական գրանցման թիվ 11014265

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

20 հունիսի 2014 թ.

N 666-Ն

**Հ Ր Ա Մ Ա Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 1194-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով.

*Հրամայում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում հեռակա ուսուցման կարգը հաստատելու մասին» N 1194-Ն հրամանի հավելվածի 6-րդ կետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.  
«Հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատող միջին մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչները, ովքեր հանրակրթական ուսումնական հաստատությունում աշխատանքի են ընդունվել մինչև 2010 թվականը, կարող են ուսումը շարունակել տվյալ մասնագիտության 3-րդ կուրսից՝ բուհի կողմից սահմանված ժամկետում հանձնելով առարկայական տարբերությունները:»:
2. ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչությանը (վարչության պետ՝ Ռ. Սուքիասյան), իրավաբանական վարչությանը (վարչության պետ՝ Վ. Բավեյան). օրենքով սահմանված կարգով սույն կանոնները ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

**Ա. Աշոտյան**